

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

(Նվիրված մեծաճուճ ճայագետ, ակադ. էդ. Աղայանի ծննդյան 85-ամյակին)

Լրացավ Երևանի պետական համալսարանի երախտավոր, ակադեմիկոս լեզվաբան էդուարդ Բագրատի Աղայանի ծննդյան 85-ամյակը: Այդ հիշարժան տարեկիցին էր նվիրված մայիսի 21 — 22-ին բանասիրական ֆակուլտետի Ե. Չարենցի անվան դասընթացում հրատարակված գիտական նստաշրջանը, որը կազմակերպել էին հայոց լեզվի և ընդհանուր ու համեմատական լեզվաբանության ամբիոնները:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ԵՊՀ ռեկտոր, ՀԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը: Հռչակավոր լեզվաբան Հր. Աճառյանի սանը, ասաց նա, մեծ ավելի ունի հայ լեզվաբանության զարգացման ասպարեզում: Ապա ռեկտորը էդ. Աղայանին բնութագրեց որպես անխոնջ հետազոտող, հմուտ մանկավարժ և գիտության ու կրթության անմնացորդ նվիրյալ, ինչպես նաև իր ժողովրդի ու հայրենիքի բախտով ու ճակատագրով մտահոգված, ժամանակի հրատապ խնդիրների լուծմանը հետամուտ հասարակական գործիչ ու մարդ-անհատականություն:

Համալսարանի երախտավորների շարքում էդ. Աղայանը իր մնայուն տեղն ունի, այնուհետև ասաց ռեկտորը: 1933 թ. մինչև իր կյանքի վերջը (1991 թ. դեկտեմբերի 29) նա մնաց համալսարանից անբաժան, դարձավ Հր. Աճառյանի ասպիրանտը, 1939-ից սկսեց իր դասախոսական աշխատանքը, 1941-ին ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1945 թ.-ին՝ դոկտորի գիտական աստիճան, 1942-ից դոցենտ էր, իսկ 1946-ից՝ պրոֆեսոր, 1953-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից, իսկ 1982-ին՝ իսկական անդամ, 1970-ին նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 1980 և 1985 թթ., երկու գումարումներում, ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր:

Համալսարանում էդ. Աղայանը 1956—1985 թթ. վարել է ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնը, եղել է բանասիրական ֆակուլտետի ղեկան (1947—1951 թթ.), գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (1953—56 թթ.), տարիներ շարունակ ղեկավարել է հայագիտական կենտրոնը, 1986 թ. մինչև կյանքի վերջը խմբագրել «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսը և այլն:

Հայաստանի գիտությունների ակադեմիայում

և էդ. Աղայանը վարել է պատասխանատու պաշտոններ. 1952—56-ին եղել է Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, տնօրենի տեղակալ, ՀԽՍՀ լուսավորության նախարարության բուհերի բաժնի վարիչ, մի շարք խորհուրդների անդամ ու նախագահ և այլն:

Ներկա գիտաժողովը, շարունակեց ռեկտորը, ոչ միայն երախտագիտության դրսևորում է իր ողջ գիտակցական կյանքը համալսարանական կրթությանն ու գիտությանը նվիրած դասախոսի վաստակն ու գործը գնահատելու, այլև հարգանքի տուրք է նրա հիշատակը վառ պահելու առումով: Մեծարանքի ու գնահատանքի այսպիսի միջոցառումները ուսանելի մեծ խորհուրդ ունեն նաև ուսանողությանն ու երիտասարդ գիտնականներին դաստիարակելու համար:

Այնուհետև ակադ. Ռ. Մարտիրոսյանը մի քանի դրվագ պատմեց էդ. Աղայանի հետ համալսարանում ու ակադեմիայում իր ունեցած հանդիպումներից ու գրույցներից՝ մեկ անգամ ևս ընդգծելով նրա սկզբունքայնությունն ու անաշուկայնությունը գիտական խնդիրներին առնչվող հարցերում և անսահման բարոյությունը՝ մարդկային հարաբերություններում:

Առաջին զեկուցումը, որով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Զահուկյանը, նվիրված էր էդ. Աղայանի գիտահետազոտական ու մանկավարժական գործունեությանը: Աղայանին որպես մանկավարժի, ես չեմ կարող գնահատել, քանի որ ես չեմ լսել նրա դասախոսությունները և չեմ եղել նրա սանը: Սակայն նա, որպես գիտնական, մեծություն է մեր լեզվաբանության ասպարեզում: Նա բազմաթիվ մենագրությունների, դասազբրքերի ու ուսումնական ձեռնարկների, ինչպես և 150-ից ավելի գիտական մանր ու մեծ հոդվածների հեղինակ է, որոնք ընդգրկում են ընդհանուր լեզվաբանության, հայ լեզվաբանության պատմության, համեմատական քերականության, ժամանակակից հայոց լեզվի պատմության ու տեսության, բառագիտության ու ստուգաբանության, բարբառագիտության ու բանասիրականության, հայոց գրի ու գրություն, ինչպես և սովորելիքի պատմության ու լատի-

ներենի քերականութեան ոլորտները: Նշված այս բնագավառներում էդ. Աղայանն ունի իր ներդրումը: Նրա «Լեզվաբանութեան ներածութիւն» դասագիրքը, որով կրթվել են հայ լեզվաբանների բազմաթիվ սերունդներ, 1947-ից առ այսօր ունեցել է մի շարք բարեփոխված ու լրացված հրատարակութիւններ:

Այս գիրքը 1959 թ. տպագրվել է նաև ուսեբնն և երաշխավորվել որպէս ուսումնական ձեռնարկ երրորդային Միութեան բուհերի բաժնատարական ֆակուլտետների համար: Արժեքավոր են նաև էդ. Աղայանի «Հայ լեզվաբանութեան պատմութիւն» երկհատորյակը (1958—1962 թթ.), «Մեղրու բարբառը» (1964 թ.), «Պատմահամեմատական մկնդր լեզվաբանութեան մեջ» (1957), «Գրարարի քերականութիւն» (Հատոր Ա, գիրք 1, 1964), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (1967), «Քառաբնական և ստուգաբանական հետազոտութիւններ» (1974), «Նախամեսարոյան հայ գրի ու գրականութեան, մեսարոյան արտերենի և հարակից հարցերի մասին» (1977), «Ընդհանուր և հայկական բառագիտութիւն» (1984) աշխատութիւնները, որոնց մեջ հեղինակը վերլուծում է հայագիտութեան և հայերենագիտութեան բազմաթիվ կենսոտ խնդիրներ:

էդ. Աղայանը անդրադարձել է նաև արևելյան գրականութեան հարցերին, համալսարանում դասախոսել «Արևելքի գրականութեան պատմութեան և մայրենի լեզվով շարադրել է այդ առարկայի առաջին ձեռնարկը՝ «Դրվագներ Արևելքի գրականութեան պատմութեան» (1971), վերլուծել է Նիզամի Գյանջևիի ստեղծագործութիւնները՝ «Նիզամի Գյանջևի» (1948), գրել է Օմար Խայյամի «Քառյակները» առաջարանը (1959), կատարել է գեղարվեստական երկերի թարգմանութիւններ և այլն: Եվ այս ամենի հետ նա հասցրել է զբաղվել հայոց տոմարների խնդիրներով, ստեղծել է մեծարժեք «Արդի հայերենի բացատրական բառարանը» (1976):

էդ. Աղայանի գիտական վաստակը ծանրակշիռ է, իր խոսքն ամփոփելով՝ ասաց զեկուցողը, որով դեռ լեզվաբանների շատ սերունդներ պիտի կրթվեն ու դաստիարակվեն:

Հայոց լեզվի պատմութեան ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր Հովհ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված էր «էդ. Աղայանը և իր ժամանակը» թեմային, որի մեջ հեղինակը ներկայացրեց անվանի դասախոսի ու պիտութեան երախտավորի ապրած բարձր ու հակասական ժամանակը, ուրվագծեց Աղայանի կյանքի ու գործունեութեան ուղին: Զեկուցողը նշեց, որ էդ. Աղայանի ապրած ժամանակաշրջանը՝ սկսած Մեծ եղեռնից մինչև արցախյան ազատագրական պայքար, լի է եղել հակասութիւններով: Եվ նա ապրել ու արեղծագործել է այդ բարձր ու հակասական ժամանակներում: Նրա մանկութիւնը շաղախվել է Հոկտեմբերյան հեղափոխութեան ոտման:

տիկայով, իսկ հետագա գործունեութիւնը՝ ուսանողական տարիներից (1933—1938 թթ.) մինչև 29 Ա իսկական անդամ ընտրվելը (1982 թ.) և դրանից էլ հետո՝ մինչև իր մահը, շուրջ հինգ տասնամյակ, ծավալել է գիտութեան մեջ մարքս-լենինյան աշխարհայացքի ու գաղափարախոսութեան տիրապետութեան շրջանում: Կառնիստական գաղափարախոսութիւնը, որն իր հավասարութեան, ազատութեան ու լուսավորութեան կարգախոսների հետ մեկտեղ բերեց նաև հին աշխարհը հիմնովին վերափոխելու, համաշխարհային պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու մի ծրագիր, ըստ էութեան դարձավ բոլորի համար պարտադիր ու անբնադատելի: Այդ գաղափարախոսութիւնը պարտադրվեց բոլորին, ուստի էդ. Աղայանը չէր կարող զերծ մնալ դրանից:

Երբ այսօր մենք ուսումնասիրում ենք նրա աշխատութիւնները, նկատում ենք, որ դրանց վրա իրենց կնիքն են դրել ժամանակի գաղափարախոսական հակասութիւնները: Եթէ վկայակոչել միայն այն փաստը, որ նրա «Լեզվաբանութեան ներածութիւն» դասագիրքը (1949 թ.), որի առաջին հրատարակութիւնը իրականացվել է 1947-ին՝ «Ընդհանուր լեզվաբանութեան դասընթաց» և վերջին հրատարակութիւնը՝ «Լեզվաբանութեան հիմունքներ» (1987 թ.), վերնագրերով, մինչև այսօր ունեցել է բազմաթիվ հրատարակութիւններ, և ամեն անգամ այն լույս է տեսել արմատական փոփոխութիւններով ինչ-որ մի նոր մեթոդի ազդեցութեան տակ (պատմահամեմատական, ըստ Մառի լեզվի նոր ուսումնասիր, ստալինյան լեզվաբանութեան, մարքսիստական և այլն), սուր բավական է հասկանալու համար, թե դրա հեղինակը ինչպիսի գիտական որոնումների մեջ է եղել տաճարակներ շորունակ:

Սակայն, այս ամենով հանդերձ, էդ. Աղայանը մինչև իր կյանքի վերջը մնացել է գիտութեան նվիրյալ ու հայագիտութեան շատագու՛ն նրա շատ աշխատութիւններ կման իրրև հայոց լեզվի կառուցվածքի քննութեանը նվիրված ժամանակակից լեզվաբանութեան ամենախիտ պահանջները բավարարող վերլուծութիւններ: Դրանց էլ եթէ ավելացնենք Աղայանի հեղինակած բուհական ու դպրոցական դասագրքերը, ապա նրա գիտամանկավարժական գործունեութեան շրջանակները ավելի են ընդլայնվում, և նա այս պարագայում ևս հանդես է գալիս իրրև հմուտ ուսուցիչ ու դասախոս: Եղածի, հետ մեկտեղ պիտք է նշել նաև նրա կազմած «Արդի Պայերենի բացատրական բառարանը» որը բավական էր միայն, որպէսզի նրա հեղինակը հավերժ մնար իրրև հայագիտութեան մեծներից մեկը:

էդ. Աղայանը մեզանում նաև երախտագետ սան էր, շեշտեց պրոֆ. Հովհ. Բարսեղյանը: Նա մինչև իր կյանքի վերջը նվիրված մնաց իր մեծ ուսուցչապետ Հր. Աճառյանի հիշատակին, որի վիթխարածափ էր երկրի մեծ մա-

սը կարողացավ խմբագրել, ծանոթագրել ու հրատարակության պատրաստել: Նրա գրած առաջաբաններով, հմուտ խմբագրությամբ ու հսկողությամբ են տպագրվել «Լիակատար քերականություն հայոց լեզվի» ութհատորյակը, «Հայերեն արմատական բառարանի» չորսհատորյակը, «Հայոց անձնանունների բառարանի» հինգհատորյակը, «Հայոց լեզվի սլոտմություն» երկհատորյակը, «Հայոց գրերը», «Բանասիրական հետազոտությունները», «Կյանքիս հուշերից»-ը և շատ այլ աշխատություններ, որոնք հայագիտական կրթողներ են իրենց տեսքով ու բովանդակությամբ:

Վերջում, ասաց զեկուցողը, գիտնականը զընհատվում է իր թողած ժառանգությամբ: Իսկ էդ. Աղայանը մնայուն գործեր ստեղծած անհատականություն էր, որի գիտական ժառանգությունը դեռ երկար է ծառայելու հայագիտությանը:

«էդ. Աղայանը բառարանագետ»,—այսպես էր վերնագրված հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր Ա. Սուբիասյանի զեկուցումը: Նրա հեղինակը հատկապես կանգ առավ էդ. Աղայանի կազմած երկհատոր «Արդի հայերենի բացատրական բառարանի» վրա, ցույց տվեց նրա կառուցվածքի առանձնահատկությունները, բառերի ընտրության ու բացատրության սկզբունքները և այլն: Զեկուցողը նշեց, որ այդ բառարանում ժողովվել ու գիտական կուռ համակարգման են ենթարկվել 135.600 բառային և շուրջ 11 հազար դարձվածային միավորներ, որոնցից 15 հազարը առաջին անգամ են բառարանագրվել: Բառարանը կազմելիս էդ. Աղայանը գործադրել է իր բառարանագիտական ու բառարանագրական բոլոր գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև բառագիտական ու լեզվաբանական համակողմանի իմացություններն ու կարողությունները: Նա կարողացել է ամեն մի բառի կամ դարձվածքի համար անել քերականական ու ռեական նշումներ, տալ դրանց սպառիչ բացատրությունները, սահմանադասել բազմիմաստ բառերի զանազան իմաստները, զուգահեռ՝ ձևերի օգտագործման հնարավոր տարբերակները և այլն, որոնց համար անհրաժեշտ են եղել նաև զեղագիտական ու լեզվական նուրբ զգացողություն և գիտողականություն: Այդ վիթխարի աշխատանքը էդ. Աղայանը իրականացրել է տարիների լարված աշխատանքով, որն էլ նրան բերել է հմուտ բառարանագետի համբավ, իսկ ներս ստեղծած ստվարածավալ բառարանը ձեռք է բերել համընդհանուր ճանաչում, իր զեկուցումը եզրափակելով՝ ասաց պրոֆ. Ա. Սուբիասյանը:

էդ. Աղայանը մեր ժամանակի մեծագույն լեզվաբաններից է, իր «Բառագիտական հարցերը» էդ. Աղայանի ուսումնասիրություններում» թեմայով զեկուցման մեջ ասաց ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Եզեկյանը: Նա շարունակելով հայ լեզվաբանության մեջ արդեն իսկ ստեղծված լավագույն ավան-

դույթները իր բազմակողմանի դրսևորումներով ու հյուզավորումներով, զարգացման մի նոր աստիճանի հասցրեց մեր լեզվաբանական միտքը: Կարելի է ասել, շարունակեց զեկուցողը, որ հայերենագիտության մեջ շկա համարյա մի բնագավառ, որը դուրս մնացած լինի անվանի գիտնականի ուշադրության և ուսումնասիրության ոլորտից: Աղայանը լուրջ ներգրում ունի հայ լեզվաբանության պատմության, հայերենի գիտական քերականության ստեղծման շնորհակալ գործում:

Իր ուսումնասիրություններում էդ. Աղայանը նորովի և գիտական պատշաճ մակարդակով է ներկայացրել նաև հայերենի բառագիտական հարցերը, ընդգծեց զեկուցողը: Դեռևս իր «Լեզվաբանության ներածություն» բուհական ձեռնարկում բաղձավաստակ գիտնականը անուրաշարձել է բառագիտության կարևորագույն ու կենսոտ հարցերին, որոնք մինչ այդ զգալի տեղ էին զրաղեցրել անվանի հայագետների Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Ստ. Մալխասյանցի և այլոց լեզվաբանական ուսումնասիրություններում:

Բառագիտության հարցերը, սակայն, ընդգրծեց զեկուցողը, ավելի բազմակողմանի և խորը վերլուծության են ենթարկվել նրա «Ընդհանուր և հայկական բառագիտություն», «Տերմինագիտություն», «Բառքնական և ստուգաբանական հետազոտություններ» աշխատություններում: Հետևելով հայ դասական լեզվաբանության մեջ ընդունված տեսակետներին և հենվելով դրանց վրա՝ անվանի լեզվաբանը նորովի ու հանգամանորեն և ընդարձակ մեկնաբանություններով է ներկայացնում բառի և բառապաշարի ուսմունքը, նրանց սահմանումն ու դասակարգումը, ստուգաբանության, իմաստաբանության, տերմինաբանության և բառարանագրության բազմաթիվ հարցեր, բառի բնութագրության մեջ նա առաջին պլան է մղում ոչ միայն արդեն իսկ եղած տեսական սահմանումներ, այլև որոշակիորեն տարբերակում է բառի անվանողական դերն ու առարկայական վերաբերությունը, ինչպես նաև անհրաժեշտ մեկնաբանություններ տալիս՝ «առարկայական վերաբերություններ», «բնիմաստ», «բառի ներքին ձև» հասկացություններին:

Այնուհետև զեկուցողը մանրակրկիտ վերլուծություններով և բազմաթիվ օրինակներով հիմնավորեց այդ հասկացությունների աղայանական մեկնաբանությունները և դրանք համարեց հայ լեզվաբանական գիտության վերջին տասնամյակների նվաճումներից:

Մեծ է էդ. Աղայանի դերը նաև հայ տերմինագիտության սկզբունքների, նրա տեսական հիմունքների մշակման, գործնական խնդիրների ուրվագծման բնագավառում, այնուհետև ասաց պրոֆ. Լ. Եզեկյանը: Նա տարբերակում է ընդհանուր և մասնավոր տերմինաբանություն և գտնում, որ եթե տվյալ լեզվի բոլոր տերմինների հավաքական ամբողջությունը այդ լեզ-

վի ընդհանուր տերմինաբանությունն է, ապա ամեն մի առանձին բնագավառի մասնավոր տերմինների ամբողջությունը այդ բնագավառի մասնավոր տերմինաբանությունն է: Այս հարցերի կապակցությամբ էլ, Աղայանն անդրադառնում է բառի և տերմինի փոխհարաբերության, տերմինավորման հարցերին, ապա և տերմինաբանության ու անվանակարգության առանձնահատկություններին, տերմինաբանական ստորակարգությանը և բազմաթիվ այլ հարցերին:

Գիտական նստաշրջանի երկրորդ օրը լսվեցին ԵՊՂ ընդհանուր և համամատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Հովսեփյանի «Գրաբարի ածականի քերականական կարգերը» նույն ամբիոնի դոցենտ Յու. Գաբրիելյանի «Հնդեվրոպական արմատի կազմության սահմանափակումների խնդիրը» և դոց. Ա. Արրահամյանի «Նախադասությունների հա-

ղորդակցման տեսակների փոխհարաբերությունը և նշանագիտական բնութագրումը» թեմաներով զեկուցումները, որոնց մեջ դրանց հեղինակները վերլուծեցին հայերենում դրսևորված մի շարք առանձնահատկությունների իրենց դիտարկումներն ու եզրահանգումները:

Նստաշրջանում եղան նաև շերմ ելույթներ (պրոֆ. Ա. Մարության, դոց. Մ. Հարությունյան և ուրիշներ), որոնց հեղինակները՝ էդ. Աղայանի երբեմնի սաները, ոչ միայն ներկայացրեցին բազմազան մանկավարժի ու մեծանուն գիտնականի շուրջ վաթսուհ տարիների հարուստ ու բազմաբնույթ գործունեությունը, այլև հուշեր պատմեցին իրենց ուսուցչի ու գործընկերոջ մարդկային վեհ առաքինությունների ու բարձր արժանիքների մասին:

Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ

ՊՈԼՍԱՀԱՅՑԻԻ ՏՈՂՄԱԾԱՌԵՐԻ ՌԻՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տոհմածառերի ուսումնասիրությունը, լինելով գեներտիկայի դասական մեթոդներից մեկը, առ այսօր չի կորցրել իր արդիականությունը: Տոհմագրության ուսումնասիրման մեթոդը մշակել է Ֆ. Գալտոնը (1822—1911 թթ.): Տոհմաբանական մեթոդը հնարավորություն է տալիս շրջանցել մարդու գեներտիկական վերլուծության բարդությունները: Այն ունի կիրառական և տեսական մեծ նշանակություն, օգտագործվում է գենների ժառանգման բնույթը որոշելու համար՝ դոմինանտ թե րեցեսիվ, սեռի հետ շաղկապված թե ոչ, և թույլ է տալիս անմիջական հետևել հատկանիշների փոխանցման ընթացքին, որոշել նրանց մոնոգենությունը և պոլիգենությունը: Երևանի պետական համալսարանի գեներտիկայի և բջջաբանության ամբիոնին կից գործում է հայ ժողովրդի տոհմաբանության կաբինետ, որտեղ համաքաղաքում, համակարգվում և վերլուծվում են տոհմածառեր: Մենք կատարում ենք Հայաստանում գյուղական մեծ ընտանիքների, գիտության և մշակույթի ակնավոր գործիչների և հայ արքայական ու իշխանական տոհմական ծառերի ուսումնասիրությունը:

Օգտագործելով տոհմածառերի պատկերման և վերլուծության ժամանակակից համակարգչային ծրագրերը և ունենալով առանձին պոպուլյացիաներին վերաբերող տոհմածառեր՝ հրկայնարավոր է այդ պոպուլյացիայի համար կատարել նաև տոհմածառերի վիճակագրական վերլուծություն, օրինակ՝ որոշել ժառանգների միջին քանակը մեկ ընտանիքի համար ըստ սե-

րունդների, կանանց և տղամարդկանց կյանքի միջին տևողությունը առանձին սերունդներում և այլն:

Տոհմաբանության կարիքների նպատակներից է տոհմածառերի համալիրների ստեղծումը Հայաստանի և ընդհանրապես հայերի տարբեր պոպուլյացիաների համար:

Այս աշխատանքների շրջանակներում մենք ուսումնասիրում ենք պոլսահայ գաղութի տոհմերը, Ներկայումս պոլսահայերի տոհմածառերի մասին կարող են աղբյուր հանդիսանալ արխիվային տեղեկություններ, ձեռագրեր և հրատարակված նյութեր:

Ծղգրիտ չէ գաղութ համարել որևէ հայկական համախմբություն, քանի որ նրանցից ոչ բոլորն են շարունակել հայրենի ավանդույթները, ինչպես նաև լեզուն: Ոմանք շուտով խառնվել են տեղի ժողովրդի հետ և ձուլվել: Ոմանք դիմակայելով այս ամենին, պահպանել են իրենց ազգային ինքնությունը, ինչպես օրինակ պոլսահայ գաղութը:

Հայերը բնակվել են Բյուզանդիայում, նաև մեծ թվով նրա մայրաքաղաք Կոնստանդնուպոլսում, սկսած այն օրերից, երբ Հռոմի կայսրությունը արևելքում իր դերը փոխանցեց Բյուզանդիային: 572 թ. մայրաքաղաքում ստեղծվել է հայոց առաջին կրոնական համայնքը՝ 1453 թ.՝ թուրքերի Պոլսը գրավումից հետո, 1461 թ. Կոնստանդնուպոլսում հաստատվեց հայոց պատրիարքությունը՝ 1478 թ. արդեն այնտեղ 1000 տուն հայ կարևոր և նստազա դարերում պոլսահայ

1 Տե՛ս Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը, հ. 1, Բելյուս, 1965, էջ 202: